ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԱԶԱՐՅԱՆ ԱՐՓԻ ԱՇՈՏԻ

# ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

**РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ**

**АРПИ АШОТОВНА ЛАЗАРЯН**

# МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ СТАНДАРТЫ ОБРАЩЕНИЯ С ОСУЖДЕННЫМИ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ИХ ПРИМЕНЕНИЯ И ИМПЛЕМЕНТАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология; уголовно-исполнительное право”**

**ЕРЕВАН – 2025**

**Ատենախոսության թեման հաստատվել է**

ԳԱԱ փիլիսոփայության սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

**Գիտական ղեկավար՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Սերգեյ Վահանի Առաքելյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Դավիթ Արտյոմի Թումասյան**

**Առաջատար կազմակերպություն՝** **«Հայաստանի Եվրոպական համալսարան» հիմնադրամ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունիսի 04-ին, ժամը $15^{00}$-ին Հայ-ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան Հ. Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի ապրիլի 29-ին:

**Մասնագիտական խորհրդի քարտուղար՝**
**իրավաբանական գիտությունների թեկնածու**


**Զ. Հ. Հայրապետյան**

**Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права Национальной академии наук**

**Научный руководитель:** доктор юридических наук,профессор
**Гарник Грачикович Сафарян**

**Официальные оппоненты:** доктор юридических наук, профессор
**Сергей Ваганович Аракелян**
кандидат юридических наук, доцент
**Давид Артёмович Тумасян**

**Ведущая организация:** **Фонд «Европейский университет Армении»**

Защита диссертации состоится 04-го июня 2025 г. в $15^{00}$ часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 29-го апреля 2025 г.

**Ученный секретарь специализированного совета,**
**кандидат юридических наук**

**Дж. А. Айрапетян**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում քրեական քաղաքականության ոլորտը ենթարկվեց կտրուկ բարեփոխումների, որի արդյունքում ընդունվեցին և գործողության մեջ դրվեցին Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական նոր օրենսգրքերը: Արդյունքում արմատապես փոփոխվեց երկրի քրեաիրավական ոլորտի և հանցավորության դեմ պայքարի ուղղությունը:

Հատկապես ուշագրավ է քրեակատարողական քաղաքականությունը, որտեղ՝ ըստ նոր օրենսդրական կարգավորումների, ընդգծվում է մի սկզբունք՝ Հայաստանի Հանրապետությունը պատժողական քաղաքականությունից անցում է կատարում վերականգնողական քաղաքականության: Այս ամենը հետևանք է վերջին տարիներին պետության առավել ընդգծված միջազգայնացման և միջազգային մակարդակում ընդունված մարդակենտրոն և ժողովրդավար սկզբունքների ինտեգրման, որի պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Սահմանադրության մակարդակով:

Այդ համատեքստում կարևորվում է ներպետական օրենսդրական կարգավորումների համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին: Ընդ որում, հարկ է նկատել, որ միջազգային նորմերի գերակայության սկզբունքն առավել կարևոր է այն փափուկ ոլորտներում, որոնք զգայուն են մարդու հիմնական իրավունքների պաշտպանության տեսանկյունից, այդ շարքում է նաև քրեակատարողական ոլորտը: Հենց այս ոլորտն է, որն ամենաթիրախային է մարդու հիմնական իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանզի հենց այս ոլորտում են սահմանափակվում մարդու ազատությունը, անձեռնմխելիությունը և այլ իրավունքներ, անձը մեկուսացվում է հասարակությունից: Եվ, թեպետ հանցավորության դեմ պայքարը կարևոր է, սակայն այդ պայքարի արդյունքում չպետք է խախտվեն անձի իրավունքները և դրա արդյունքը և նպատակը պետք է բացառապես լինի անձի մոտ սոցիալական արժեքների սերմանումը և զարգացումը:

Հայաստանի Հանրապետությունում ազատազրկման դատապարտված անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ազատազրկվածների թիվը ունի նվազման միտումներ: Բայց և այնպես, անազատության մեջ պահվող անձանց հիմնական իրավունքների երաշխավորումը, նրանց տարատեսակ ոտնձգություններից պաշտպանությունը և վերջիվերջո նրանց մոտ իրավահպատակ վարքագծի ձևավորումը, վերջիններիս վերափնտեգրումը և վերասոցիալականացումը եղել են և մնում են պետության առաջ դրված կարևորագույն խնդիրներից մեկը:

Իրավունքը, առանց դրա գործնական կիրառման մեխանիզմների սահմանման և ամրագրման, առանց դրանց կիրառման նկատմամբ շարունակական մոնիթորինգի իրականացման և անընդհատզարգացման ուղղակի բարի կամքի դրսևորում է:

Ի վերջո խոսելով միջազգային ակտերով ամրագրած կանոնների մասին, կարևոր է ընդգծել, որ դրանց որդեգրումը միայն բավարար չէ, այլ անհրաժեշտ է նաև դրանք քրեակատարողական համակարգի մասը դարձնել՝ ամրագրել ոչօրենսդրական մակարդակում և գործնական կիրառման անհրաժեշտ և բավարար մեխանիզմներ ներդնելով, քանզի միջազգային չափորոշիչների ռեալիզացման գործընթացի մասին խոսելիս մասնագիտական գրականության մեջ օգտագործվում է «իմպլեմենտացում» տերմինը, որն իր ծագումնաբանության համաձայն՝ ունի լատինական արմատներև սկիզբ է առել «impleo» բառից և նշանակում է «կատարել»:

Այս ամենով հանդերձ՝ պետք է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական ոլորտը եղել և մնում է քիչ ուսումնասիրված: Տեսական մակարդակում սակավաթիվ են այն գիտնականները, որոնք իրականացրել են հետազոտություններ, իսկ դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների կիրառման և իմպլեմենտացման հիմնախնդիրների ոլորտը մնում է առհասարակ չուսումնասիրված:

«Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև մի շարք այլ հանգամանքներով: Նախ՝ մինչև օրս Հայաստանի Հանրապետությունում չի կատարվել դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող միջազգային ակտերի ոլորտի ուսումնասիրություն, որով հնարավոր կլիներ համակարգված ներկայացնել քննարկվող ոլորտում առկամիջազգային ակտերը: Երկրորդը՝ այդ ակտերի պատշաճ իմպլեմենտացիայի համար նախ և առաջ անհրաժեշտ է դրանք ոչ միայն համակարգել, այլ նաև դասակարգել խմբերի, հասկանալու համար, թե դրանցից որոնք են պարտադիր կատարման համար, իսկ որոնք ունեն բացառապես խորհրդատվականբնույթ:

Դրանից զատ հարկ է նկատել, որ թեև միջազգային և ներպետական օրենսդրությամբ առկակարգավորումները գրեթե հավասարապես վերաբերում են ազատությունից զրկված բոլոր անձանց, սակայն անազատության մեջ պահվող առանձին կատեգորիայի անձինք ունեն առանձնահատուկ վերաբերմունքի, իսկ որոշ դեպքերում նաև տարբերվող պահման պայմանների կարիք, օրինակ՝ անչափահասները, կանայք, օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք և բժշկական օգնության կարիք ունեցող դատապարտյալները:

Այնուամենայնիվ, թեև վերջին տարիներին քրեակատարողական ոլորտի բարեփոխման մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, սակայն արդիական են մնում վերասոցիալականացման ծրագրերի իրականացման, դատապարտյալի

զբաղվածության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման և կարևոր մի շարք այլ հիմնախնդիրներ:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտն են կազմում ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ուսումնասիրությունը և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության առարկան է դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների հայեցակարգային մոտեցումները, դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչների դասակարգման հիմնախնդիրները, ազատազրկում պատժատեսակը կարգավորող ներպետական իրավական ակտերը և դրանց ընդհանուր բնութագիրը, ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության կանոնակարգման հիմնական միջազգային ակտերը և դրանց բնութագրական առանձնահատկությունները ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների իմպլեմենտացիայի հիմնախնդիրները ներպետական իրավական ակտերում և իրավակիրառ պրակտիկայում, անչափահաս կին, հաշմանդամություն ունեցող, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների և ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ներպետական և միջազգային իրավակարգավորումների, առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է և դրանց կիրառման հիմնախնդիրների բացահայտումն ու լուծման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Այդ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել և լուծում ստացել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների հայեցակարգային մոտեցումները,
- վերհանել և ուսումնասիրել դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչների դասակարգման հիմնախնդիրները,
- վերլուծել ազատազրկում պատժատեսակը կարգավորող ներպետական իրավական ակտերը և դրանց ընդհանուր բնութագիրը,
- առանձնացնել ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության կանոնակարգման հիմնական միջազգային ակտերը և վերլուծել դրանց բնութագրական առանձնահատկությունները
- ուսումնասիրել և վերլուծել ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների

իմպ եմենտացիպ ի հիմնախնդիրները ներպետական իրավական ակտերում և իրավակիրառ պրակտիկպ ում

- վեր հանել անչ ափահաս կին, հաշմանդամութ յ ուն ունեցող, օտարերկրյ ա քաղաքացի, քաղաքացիութ յ ուն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայ ցող կամ ապաստան ստացած դատապարտ պ ների հետ վարվեցողութ յ ան միջազգայ ին չափորոշիչ ները և դրանց կիրառման հիմնախնդիրները, ինչ պես նաև դրանց համարժեք լուծման ուղիները:

**Հետազոտութ յ ան տեսական հիմքը:** Հետազոտութ յ ան տեսական հիմքն են հանդիսացել իրավագիտութ յ ան տարբեր ճյ ուղերի (պետութ յ ան և իրավունքի տեսութ յ ան, պետութ յ ան և իրավունքի պատմութ յ ան, միջազգայ ին իրավունք, քրեական իրավունք, կրիմինոլ ոգիա և քրեակատարողական իրավունք) գիտական աշխատութ յ ունները, որոնք առավել ապես նվիրված են դատապարտ պ ների հիմնական իրավունքների ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրութ յ անը և միջազգայ ին-իրավական ակտերի և դրանցով ամրագրվածչափորոշիչ ների իմպ եմենտացմանը:

Հետազոտութ յ ուն իրականացնել իս ուսումնասիրվել է ինչ պես Հ.Մ. Խաչ իկյ անի Դ. Ա. Թումայ անի, այ նպես էլ արտասահմանյ ան հեղինակներ Վ.Ա. Ուտկինի, Ֆ.Մ. Գորոդինեցի, Ա.Մ. Լարինայ ի, Ն.Ա. Ստրուչ կովայ ի, Ի.Վ. Շմարովայ ի և այ լ ոցհետազոտութ յ ունները:

**Հետազոտութ յ ան նորմատիվայ ին հիմքը:** Հետազոտութ յ ան նորմատիվայ ին հիմքն են կազմել Հայ աստանի Հանրապետութ յ ան Սահմանադրութ յ ունը, Հայ աստանի Հանրապետութ յ ան քրեական օրենսգիրքը, Հայ աստանի Հանրապետութ յ ան քրեակատարողական օրենսգիրքը, Հայ աստանի Հանրապետութ յ ան քրեական դատավարութ յ ան օրենսգիրքը, դատապարտ պ ների հետ վարվեցողութ յ ան չափորոշիչ ներ պարունակող միջազգայ ին-իրավական ակտերը և ազատազրկում պատժաժեսակի կարգն ու պայ մանները սահմանող այ լ իրավական ակտերը:

**Հետազոտութ յ ան փորձառնական հիմքը:** Հետազոտութ յ ան փորձառնական հիմքը կազմել են քրեակատարողական ծառայ ողների և դատապարտ պ ների շրջանում անցկացված հարցումները, քրեակատարողական ծառայ ութ յ ան ողորտում գործունեութ յ ուն իրականացնող հասարակական կազմակերպութ յ ունների ներկայ ացուցիչ ների շրջանում իրականացված բանավոր և գրավոր հարցումները:

Հետազոտութ յ ան փորձառնական հիմք է ծառայ ել նաև հեղինակի կողմից Քրեակատարողական ծառայ ութ յ ան և Քրեակատարողական քաղաքականութ յ ան մշակման ոլ որտներում իրականացրածգործնական աշխատանքը:

Հետազոտութ յ ան հիմքում դրված են նաև Ներքին գործերի նախարարութ յ ան, Արդարադատութ յ ան նախարարութ յ ան քրեակատարողական և պրոբացիայ ի ծառայ ութ յ ունների, Բարձրագույ ն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի կողմից վարվող վիճակագրական բազաները՝ դրանց վարման մեթոդաբանական և ժամանակագրական առանձնահատկութ յ ուններիև հասանել իութ յ ան հաշվառմամբ:

Ի թիվս վերոնշյալի աշխատանքի փորձառնական հիմքն են հանդիսացել Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցները, խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեի և քրեակատարողական ոլորտում հասարակական և դիտորդական գործունեություն իրականացնող այլ մարմինների կողմից հրապարակված զեկույցները:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Ատենախոսությունը հիմնականում հիմնված է դիալեկտիկայի ճանաչողության մեթոդի վրա և արտահայտում է առկաօրենսդրական կարգավորումների և դրանց գործնական կիրառության համեմատական վերլուծությունը: Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են նաև պատմաիրավական, համեմատաիրավական, վիճակագրական և այլ մեթոդներ:

**Հետազոտության գիտական նորույթը:** Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ փորձ է կատարվել ատենախոսության մակարդակում վերլուծել դատապարտյալների հետ վարվեցողության չափորոշիչներ սահմանող միջազգային-իրավական ակտերը, դրանք համադրելով և համեմատելով ինչպես ներպետական իրավական ակտերի, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի հետ: Հետազոտությունն իրականացվել է հայրենական և արտասահմանյան մի շարք երկրների տեսական աղբյուրների, միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների, ինչպես նաև պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության դինամիկ ուսումնասիրության հիման վրա:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում, որոնք հանգում են հետևյալին.

1. «Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչ» եզրույթի ներքո անհրաժեշտ է հասկանալ միջազգային մակարդակում ընդունված պարտադիր կամ խորհրդատվական բնույթ ունեցող տարբեր փաստաթղթերով սահմանված կանոններ, սկզբունքներ, ուղենիշներ, որոնք արտացոլում են անազատության մեջ պահվող անձանց իրավական վիճակին, ազատություններին, պահման պայմաններին վերաբերելի դրույթներ և ուղղված են քրեակատարողական քաղաքականության զարգացմանը:

2. Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող իրավական ակտերը դասակարգվում են տարբեր հիմքերով: Գործնական կիրառման տեսանկյունից առավել նպատակահարմար է դրանք դասակարգել պարտադիր և ոչ պարտադիր բնույթ ունեցող ակտերի, իսկ գիտատեսական տեսանկյունից՝ ընդհանուր կամ ունիվերսալ նշանակության և հատուկ նշանակության ակտերի:

3. «Բանտարկյալ» եզրույթը տեսության մեջ պետք է հասկանալ լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով այս եզրույթի ներքո պետք է հասկանալ այն բոլոր անձանց ովքեր ենթարկված են ազատությունից զրկելու հետ կապված որևէ հարկադրանքի կամ պատժի: Նեղ իմաստով «բանտարկյալ» եզրույթի ներքո

պետք է հասկանալ այն անձանց որոնք դատապարտված են ազատությունից զրկել ու հետկապված պատժի:

4. Անհրաժեշտ է մշակել և քրեակատարողական օրենսդրության ոլորտում ներդնել «խոշտանգում» եզրույթը: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ որպես հանցակազմ նախատեսված խոշտանգումը տարբերվում է դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող ակտերով ամրագրված խոշտանգում եզրույթից և դրա բովանդակությունից, որն էլ խոչընդոտում է այն քրեակատարողական ոլորտում գործնական արդյունավետ կիրառելուն:

5. Քրեակատարողական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է սահմանել և տարբերակել խուզարկության երկու տեսակ` նախատեսված և ոչ նախատեսված: Առաջինն իրենից ենթադրում է քրեադատավարական ընթացակարգերի շրջանակներում իրականացվող և քրեական դատավարության օրենսգրքի խնդիրներից բխող գործունեություն, իսկ երկրորդը` իրենից ենթադրում է քրեակատարողական հիմնարկից փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումներ կանխելու կամ խափանելու նպատակով իրականացվող գործունեություն:

6. Քրեակատարողական ծառայության գործունեության որակը հանդիսանում է դատապարտյալների վերասոցիալականացման և վերաինտեգրման երաշխիքը, ուստի մի կողմից Քրեակատարողական ծառայության համակարգում առկա թափուր` առավելապես կրտսեր խմբի պաշտոնների թիվը, իսկ մյուս կողմից առկա կադրերի մասնագիտական դեֆորմացիան ու դրա հաղթահարման ուղղությամբ քայլեր չիրականացնելն ուղիղ ազդում են դատապարտյալների վերասոցիալականացման և վերաինտեգրման արդյունավետության:

7. Միջազգային-իրավական ակտերով նախատեսված չափորոշիչները հնարավորինս արտահայտված են ներպետական օրենսդրության մեջ, սակայն դրանք կտրված են իրավակիրառ պրակտիկայից: Ներկայումս ազատազրկման կիրառումը հիմնված է արտաքսկենտրոն գաղափարախոսության վրա, մինչդեռ անձի վերասոցիալականացման տեսանկյունից ավելի նպատակահարմար է և միաժամանակ միջազգային մակարդակում ընդունված ակտերի բովանդակությունից բխում է, որ փակ հաստատություններում պատիժ կրող անձի հետ տարվող աշխատանքները պետք է կրեն անձնակենտրոն բնույթ և թեև օրենսդրության մակարդակում իրավական կարգավորումները գրեթե համապատասխանում են միջազգային չափորոշիչներին, սակայն գործնականում քրեակատարողական հիմնարկները դեռ մնում են գաղութային: Այս տեսանկյունից պետք է զարգացնել պատժի անհատական պլանավորման, դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման գործիքները և պատժի կրման ընթացքում առավել ուշադրություն դարձնել ոչ թե նախկինում վերջինիս կատարած արարքին, այլ վարքագծի դինամիկային:

8. Անհրաժեշտ է ընդունել միասնական իրավական ակտ որով կկարգավորվի քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանները, քանզի անձի պահման

պայմանները հանդիսանում են կարևոր երաշխիք վերջինիս իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Քրեակատարողական ոլորտի բարեփոխման ռազմավարական ծրագրերով նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց պահման պայմանների բարելավման տեսանկյունից առավել թիրախային լուծման տարբերակ պետք է լինի վերջիններիս համար առանձնացված մասնաշենքի կառուցումը, որը շինարարական չափորոշիչների տեսանկյունից հարմարեցված կլինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

9. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 74-րդ հոդվածն անհրաժեշտ է լրացնել նոր դրույթով, սահմանելով կարգավորում այն մասին, որ դատապարտյալի մարմնի խոռոչների զննությունը կատարվում է բացառապես բժշկական ոլորտի մասնագետի կողմից:

10. Քրեակատարողական համակարգն իր ներկայիս զարգացման մակարդակում ի զորու չէ լուծել քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացի դատապարտյալների նկատմամբ նշանակվող պատժի առանցքային նպատակը՝ դատապարտված անձի վերասոցիալականացումը, քանի որ վերասոցիալականացման գլխավոր գործիքը՝ անձի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների համար իրն է, որը չափազանց բարդ է իրականացնել այն դեպքում, երբ անձը, ում հետ տարվում են աշխատանքներ այլ մշակույթի և լեզվի կրող է: Հետևաբար՝ նրա հետ հաղորդակցվելու միջոցով համապատասխան աշխատանքներ իրականացնելը գրեթե անհնար է:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ թեկնածուական ատենախոսության մակարդակում հետազոտվել են դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական ակտերը ու դրանց իմպլեմենտացման և կիրառման գործընթացում առկա տեսական և գործնական խնդիրները: Կատարված հետազոտությունը կարող է նպաստել քրեակատարողական իրավունքի հետագա զարգացմանը և արժեքավոր լինել դրանում միջազգային-իրավական չափորոշիչների ներառման տեսանկյունից, քանզի հետազոտության առարկայի թիվս այլնի կազմել են դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների հասկացությունը, դասակարգումը, ինչպես նաև դրանք ներպետական օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում ներառելու մեխանիզմները:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է հետևյալում.

- ➢ հետազոտության տեսական եզրահանգումները, առաջարկները և արդյունքը կարող են ծառայել քրեակատարողական ոլորտի օրենսդրության հետագա զարգացմանը և կատարելագործմանը,
- ➢ հետազոտությունը կարող է օգտագործվել քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների, քրեակատարողական իրավունք առարկային վերաբերելի դասընթացների և ոլորտին առնչվող այլ հետազոտությունների իրականացման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Հետազոտության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի

Պետփրավական հետազոտությունների բաժնում: Ատենախոսության առավել կարևոր դրույթներն արտացոլվել են հեղինակի գիտական հրապարակումներում: Դրանցից մի քանիսը հեղինակի կողմից զեկուցվել են տարբերգիտական համաժողովներում:

Հետազոտության արդյունքներն օգտագործվում են նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի դասավանդման գործընթացում՝ «ՀՀ քրեակատարողական իրավունք» դասընթացում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ինը պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, տեսական, նորմատիվային և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

**Ատենախոսության առաջին գլուխն** ունի «Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ընդհանուր բնութագիրը» վերտառությունը և բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների հայեցակարգային մոտեցումները»** վերտառությամբ, վեր են հանվել դատապարտյալների հետ վարվեցողության չափորոշիչներ սահմանող միջազգային-իրավական ակտերի վերաբերյալ առկա հիմնական հայեցակարգային մոտեցումները: Սույն ենթագլխում մեր կողմից կատարված վերլուծության հիման վրա առաջարկվել է սահմանել «դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչ» հասկացությունն և դրաբովանդակությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխն ունի **«Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչների դասակարգման հիմնախնդիրները»** վերտառությունը: Ենթագլխի շրջանակներում ներկայացվել են տեսության մեջ առկա՝ դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչների դասակարգման հիմնական ուղղությունները և դրանց վերլուծության հիման վրա առաջարկվել է գործնական կիրառման տեսանկյունից դրանք դասակարգել պարտադիր և ոչ պարտադիր բնույթ ունեցող ակտերի, իսկ գիտատեսական տեսանկյունից՝ ընդհանուր կամ ունիվերսալ նշանակության և հատուկ նշանակության ակտերի:

**Ատենախոսության երկրորդ գլուխը՝** «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ներպետական և միջազգային իրավակարգավորումները» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝** «Ազատազրկում պատժատեսակը կարգավորող ներպետական իրավական ակտերը և դրանց ընդհանուր

բնութագիրը» վերտառությամբ, մեր կողմից համակարգային ներկայացվել և վերլուծվել են «ազատազրկում» պատժատեսակին վերաբերել ի ներպետական իրավական դաշտը, ինչպես նաև դրանցով կարգավորվող դատապարտյալի հիմնական իրավունքները:

**Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում**, որն ունի «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության կանոնակարգման հիմնական միջազգային ակտերը և դրանց բնութագրական առանձնահատկությունները» վերտառությունը, ներկայացված են դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող միջազգային ակտերը՝ ընդգծելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները և դրանցով նախատեսված հիմնական կարգավորումները:

«Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների իմպլեմենտացիայի հիմնախնդիրները ներպետական իրավական ակտերում և իրավակիրառ պրակտիկայում» վերտառությամբ **երկրորդ գլխի երրորդ ենթագլխում համեմատական** վերլուծության են ենթարկվել միջազգային-իրավական ակտերով սահմանված դատապարտյալների հետ վարվեցողությանը վերաբերել ի հիմնական դրույթները և ներպետական իրավական ակտերն ու իրավակիրառ պրակտիկան: Ատենախոսության այս ենթագլխում ի թիվս այլնի վերլուծվել են քրեակատարողական ծառայողների մասնագիտական դեֆորմացիային, քրեակատարողական հիմնարկներում իրականացվող խուզարկություններին և օպերատիվ-հետախուզական միջոցառումներին վերաբերել ի կարգավորումներ և դրանց իրականացման գործնական հիմնախնդիրներ:

**Ատենախոսության երրորդ գլուխը՝** «Առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման հիմնախնդիրները Յայաստանի Յանրապետությունում» վերտառությամբ բաղկացած է չորս ենթագլխից:

**Երրորդ գլխի առաջին ենթագլուխն** ունի «Անչափահաս դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման որոշ հիմնախնդիրները Յայաստանի Յանրապետությունում» վերտառությունը: Այս ենթագլուխը նվիրված է անչափահասների հետ վարվեցողության հիմնական միջազգային ակտերի և Յայաստանի Յանրապետության ներպետական օրենսդրության համակարգային և համադրված վերլուծությանը:

**Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝** «Կին դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց իրավակիրառ պրակտիկայի խնդիրները Յայաստանի Յանրապետությունում» վերտառությամբ վերաբերում է քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կանանց հետ վարվեցողության առանձնահատկություններ սահմանող միջազգային-իրավական չափորոշիչների ուսումնասիրությանը:

**Երրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝** «Յաշմանդամություն ունեցող դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց համարժեք կիրառման հիմնախնդիրները Յայաստանի Յանրապետությունում» վերտառությամբ նվիրված է քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող հաշմանդամություն ունեցող անձանց

վերաբերել ի միջազգային-իրավական չափորոշիչների և ներպետական կարգավորումների և պրակտիկայի համադրված և համակարգված վերլուծությանը:

**Երրորդ գլխի չորրորդ ենթագլուխն ունի** «Օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությունը: Այս ենթագլխում ուսումնասիրվել են անազատության մեջ գտնվող՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանք համադրվել են ներպետական իրավական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հետ

**Եզրակացությունում,** ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթնե-րի, ներկայացվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները .

1. Պատիժների նշանակման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար քիչ է նշանակվում ազատազրկում պատժատեսակը: Դա կապված է ինչպես ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ընդլայնմամբ, այնպես էլ պատժողական քաղաքականությունից վերականգնողական քաղաքականության անցմամբ: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ ազատազրկումը պատժի համակարգում հանդիսանում է ամենախիստ պատժատեսակներից մեկը և ենթադրում է անձին հասարակությունից հատուկ պայմաններում մեկուսացում: Այդպիսի մեկուսացվածության պայմաններում պահվող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր է հետևել միջազգային մակարդակում ընդունված իրավական չափորոշիչներին: Կատարված ուսումնասիրության արդյունքում մենք եկանք այն եզրահանգմանը, որ ներպետական իրավական ակտերի մակարդակում գրեթե ամբողջությամբ արտացոլված են դատապարտյալների հետ վարվեցողության պարտադիր բնույթ ունեցող միջազգային-իրավական ակտերով սահմանված չափորոշիչները: Միաժամանակ, արձանագրեցինք, որ միայն օրենսդրական կարգավորումների մակարդակում միջազգային-իրավական չափորոշիչներն ամրագրելը բավարար երաշխիք չէ անձի՝ քրեակատարողական հիմնարկում արժանապատիվ պահելու ուղղությամբ, անհրաժեշտ է նաև դրանք կյանքի կոչել և հնարավորինս կրճատել այն խզումը, որն այժմ առկա է օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի միջև:

2. Տեսական մակարդակում չկա հստակ ամրագրում այն մասին, թե ինչ պետք է հասկանալ «դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչ» հասկացության ներքո: Առհասարակ դրանք տարբեր իրավաբանական ուժ և բովանդակություն ունեցող միջազգային-իրավական ակտերով ամրագրված դրույթներ են, որոնց նպատակը քրեակատարողական ոլորտի բարեփոխումն է, այն առավել մարդակենտրոն դարձնելը և այնպիսի սկզբունքների սահմանումը, որոնք գործնականում իրապես կնպաստեն անձի վերասոցիալականացմանը և վերաինտեգրմանը:

3. Ուսումնասիրության արդյունքում մեր կողմից հնարավորինս վեր են հանվել դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների դասակարգման վերաբերյալ գրականության մեջ առկա տեսակետները, սակայն մենք կարծում ենք, որ գործնական կիրառության տեսանկյունից առավել նպատակահարմար է դրանք դասակարգել պարտադիր և խորհրդատվական բնույթ ունեցողների: Դասակարգման այս տեսակի ընտրությունը կարող ենք հիմնավորել նրանով, որ գործնական կիրառման տեսանկյունից պետության համար՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտի, առավել կանխատեսելի պետք է լինի, թե որ չափորոշիչներն են իր համար պարտադիր և որոնց չկատարումը կարող է առաջացնել բացասական հետևանքներ: Բացի այդ նշված չափանիշի կիրառմամբ դասակարգումը թույլ կտա ավելի ռացիոնալ դրանք ներառել իրավակիրառ պրակտիկայում և ներպետական օրենսդրության ոլորտում: Ինչ վերաբերում է գիտատեսական ոլորտին, ապա մեր կարծիքով, առավել ողջամիտ է հիմք ընդունել դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ընդհանուր կամ ունիվերսալ նշանակության և հատուկ նշանակության ակտերի բաժանման սկզբունքը:

4. Թեև վերջին տարիներին մի շարք օրենսդրական ակտերում հանդիպում ենք, այսպես կոչված «լիազորող նորմերի», որոնք «լիազորում» են Կառավարությանն ընդունել օրենսդրական ակտերից բխող ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգել որոշակի ոլորտներ, սակայն դատապարտյալի իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր է, որ այն բոլոր ակտերը, որոնք ուղղակիորեն վերաբերում են դատապարտյալի իրավունքներին կամ վերջինիս համար սահմանում են պարտականություններ բացառապես նախատեսված լինեն օրենսդրական ակտերով:

5. Միջազգային ակտերը ներպետական օրենսդրության շրջանակում իմպլեմենտացնելու և կիրառելու գործընթացում կարող ենք բախվել որոշակի եզրութաբանական դժվարությունների: Մասնավորապես՝ մի շարք միջազգային ակտերում, օրինակ՝ Եվրոպական բանտային կանոններում և Նելսոն Մանդելայի կանոններում օգտագործվում է «բանտարկյալ» եզրույթը, որն ընդգծում է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ դրանք կիրառելի են: Խնդիրը կայանում է նրանում, որ թե՛ Եվրոպայի խորհրդի, թե՛ ՄԱԿի կողմից ընդունված փաստաթղթերի մեծ մասում օգտագործվում է «under detention» եզրույթը, որը թարգմանաբար նշանակում է անձ, որը գտնվում է կալանքի տակ այսինքն՝ անազատության մեջ:

Միաժամանակ հարկ է նկատել, որ ներպետական իրավական համակարգում ևս «բանտարկյալ» հասկացությունը ներկայումս առհասարակ բացակայում է: Ի տարբերություն Քրեական դատավարության նախկին օրենսգրքի նոր ընդունված Քրեական դատավարության օրենսգրքում այլևս չկա նաև «դատապարտյալ» հասկացությունը: Հասկացությունը չի մեկնաբանվում նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերում Ուստի, միջազգային նորեն ընդունված չափորոշիչների պատշաճ իմպլեմենտացման և կիրառման նպատակով անհրաժեշտ է ամրագրել «բանտարկյալ» եզրույթը, դրանով իսկ ամրագրելով այն սուբյեկտների շրջանակը, ում նկատմամբ դրանք կիրառելի են:

Բացի այդ կարող ենք փաստել, որ «բանտարկյալ» միջազգային-իրավական եզրույթի օգտագործումը ներպետական օրենսդրական մակարդակում խնդրահարույց է և այն կարող է մեկնաբանվել և օգտագործվել միայն որոշակի մանավոր դրսևորումներում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ այն, որ ՀՀ օրենսդրությունը հրաժարվել է «բանտային» համակարգից և ինստեգրել ոչ թե անձին պատժել ու, այլ վերջինիս վերաինտեգրել ու, վերաուցիալականացնել ու և հասարակություն վերադարձնել ու ճանապարհը:

6. Դատապարտյալների հետ միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող ակտերում ամրագրված են դրույթներ այն մասին, թե ինչ տիպի շենքային պայմանների պետք է համապատասխանեն քրեակատարողական հիմնարկները, որպեսզի ապահովվի այնտեղ բնակվող անձանց արժանապատվությունը: Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ ընդունված չէ որևէ իրավական ակտ որով ամրագրված են չափորոշիչներ այն մասին, թե ինչ տիպի շինարարական նորմերի պետք է համապատասխանի քրեակատարողական հիմնարկը, որը մի կողմից ունի անվտանգային նշանակություն, իսկ մյուս կողմից այնտեղ բնակվող անձանց արժանապատվության հարգման: Այս խնդիրն առավել է ընդգծվում հաշվի առնելով Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի վերջին տարիներիզեկույցներում առկաամրագրումները:

7. Քրեակատարողական հիմնարկներում անվտանգության ապահովման, ինչպես նաև պենիտենցիար հանցավորության դեմ պայքարի տեսանկյունից մեծ նշանակություն ունի այնտեղ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները և խուզարկությունները, սակայն այս գործիքները օրենսդրական մակարդակում կարգավորված են թերի և չեն արտացոլում այն անհրաժեշտ տարբերությունները, որոնք բնորոշ են ռեժիմային գոտուն: Անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում առանձին գլխով նախատեսել քրեակատարողական հիմնարկների տարածքում կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, այն կատարել ու լիազորություններ ունեցող անձանց շրջանակը և այն երաշխիքները, որոնք ունի անձը, ով գտնվում է քրեակատարողական հիմնարկում:

8. Քրեակատարողական հիմնարկներում անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ուսումնասիրության հիման վրա գալիս ենք այն եզրահանգմանը, որ «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում «բնակարան» քրեադատավարական եզրույթը օգտագործվում է ոչ իրավաչափ, ինչպես նաև հիմնավորվել է, որ Եվրոպական կոնվենցիայի իմաստով «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը կարող է դիտարկվել որպես անձի մասնավոր կյանքի գաղտնիության, ինչպես նաև անձի լռել ու և իր դեմ ցուցմունք չտալ ու իրավունքների խախտում, ինչպես նաև հանգեցնել դրա իրականացման արդյունքումձեռք բերված ապացույցի անթույլատրելիության:

9. Քրեակատարողական օրենսգրքի համապատասխան հոդվածների համադրված

և համակարգված վերլուծությունից կարող ենք գալ եզրահանգման, որ դատապարտյալի կացարանը, մեկուսացված խուցըկամ նրագտնվելու այլ վայրը խուզարկելը կարող է իրականացվել երկու ընթացակարգով, որոնցից մեկը կարող ենք կոչել՝ անվտանգության ապահովման նպատակով (ոչ նախատեսված խուզարկություն) և քրեակատարողական ընթացակարգերի հիման վրա խուզարկություն(նախատեսված խուզարկություն):

Նշված սահմանազատումն ունի ոչ միայն ձևական, այլ բովանդակային իմաստ, քանի որ այն կապված է անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտ և բավարար գործիքների նախատեսմամբ: Կարևոր է, որ խուզարկության նշված տեսակները միմյանցից հստակ տարանջատված լինեն նաև օրենսդրական մակարդակում, ուստի անհրաժեշտ է Քրեակատարողական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների միջոցով սահմանել խուզարկության երկու տեսակ՝ նախատեսված և ոչ նախատեսված, որոնք միմյանցից հստակ կտարբերվեն թե՛ իրականացման մեխանիզմներով, այլ նաև էլ՝ նպատակներով:

10. Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական ակտերով սահմանված չափորոշիչների համաձայն՝ դատապարտյալի մարմնի խոռոչների զննումները պետք է իրականացվեն միայն որակավորված բուժաշխատողի կողմից, ապահովելով հիգիենայի, առողջության և անվտանգության չափանիշները: Նշված նորմը հանդիսանում է կարևոր երաշխիք դատապարտյալի առողջության և արժանապատվության իրավունքի պահպանման տեսանկյունից, ուստի դրա գործնական կիրառման նպատակով անհրաժեշտէ Քրեակատարողական օրենսգրքի 74-րդ հոդվածը լրացնել նոր կետով, սահմանելով կարգավորում այն մասին, որ դատապարտյալի մարմնի խոռոչների զննությունը կատարվում է բացառապես բժշկական ոլորտի մասնագետի կողմից:

11. Միջազգային-իրավական ակտերով ամրագրված չափորոշիչների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկների ծառայողները պետք է ընտրվեն հնարավորինս մանրակրկիտ և վերջիններս պետք է օժտված լինեն մասնագիտական և մարդկային բարձր որակներով, սակայն հարկ է արձանագրել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական հիմնարկներում ծառայությունը պետական ծառայության ոչ գրավիչ ուղղություններից է և առավելապես ծառայողների կրտսեր խմբում (որը, ի դեպ գործնականում ամենահաճախն է շփվում դատապարտյալների հետ) թափուր տեղերը բազմաթիվ են: Այս խնդիրն առավել է ընդգծվում հանրապետությունում «Քրեակատարողական գործ» մասնագիտացմամբ կրթություն տվողհաստատությունների բացակայության և միաժամանակ առկա կադրերի մասնագիտական դեֆորմացիայի պայմաններում, որը վերջինների ոչ թե մասնագիտական, այլ հոգեբանական հատկանիշների ձևափոխման արդյունքում ստեղծում է աշխատանքային արդյունավետության նվազեցում:

12. Անչափահաս դատապարտյալների հետ վարվեցողությանը նվիրված են ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր նշանակության մի շարք միջազգային ակտեր: Այդ ակտերի ուսումնասիրության արդյունքում կարելի է գալ այն եզրահանգման, որ դրանց հիմքում դրված են մի քանի հիմնական սկզբունքներ,

որոնց կառուցման միջոցով հնարավոր է իրականացնել անչափահաս իրավախախտի դեպի հասարակություն վերադարձի (վերաինտեգրման) և վերասոցիալականացման գործընթացը: Ի տարբերություն չափահասի՝ անչափահասի վերասոցիալականացման և վերաինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները, որոնք մանրամասն վերլուծված և արտահայտված են միջազգային փաստաթղթերում: Անժխտելի է, որ անչափահասների հասարակություն վերադարձի և հետագայում նրանց կողմից հանցագործությունների կանխարգելման հարցում անգնահատելի է կրթության իրավունքի պատշաճ իրականացման գործընթացի ապահովումը:

13. Ազատազրկման հետ կապված պատիժները սահմանող ներպետական իրավական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ թե՛ պատժի նշանակման, թե՛ պատժի կրման ընթացքում բոլոր արտոնությունները տրվում եմ միայն այն կանանց, ովքեր ունեն երեխաներ, ավելին՝ ում երեխաները բնակվում են նրանց հետ միասին՝ քրեակատարողական հիմնարկում: Ազատազրկված կանանց վերաբերյալ առկա միջազգային իրավական ակտերի և ներպետական օրենսդրության համակարգային և համադրված վերլուծության արդյունքներով կարող ենք պնդել, որ այս ոլորտում թե՛ ներպետական օրենսդրությունն, թե՛ դրա արդյունքում ձևավորված պրակտիկան ունեն կատարելագործման կարիք, քանզի այս ոլորտի իրավակարգավորումները հիմնականում ուղղված են միայն հղի կամ իրենց մոտ երեխաներ ունեցող կանանց իրավունքների պաշտպանությանը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ կանայք իրենց սեռային առանձնահատկություններից ելնելով ունեն առանձնահատուկ վերաբերմունքի և մոտեցման կարիք և դա չի կարող դիտվել որպես կանանց և տղամարդկանց միջև խտրականության դրսևորում, այլ պետության կողմից ֆիզիոլոգիական և այլ առանձնահատկություններով պայմանավորված կանանց նկատմամբ առանձնահատուկ խնամքի և ուշադրության դրսևորում:

14. Այս պահին Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ հարմարվեցված քրեակատարողական հիմնարկներ առկա չեն և նրանք, որպես կանոն, պահվում են քրեակատարողական հիմնարկներում գործող բուժական մասերում, որը միջազգային-իրավական չափորոշիչների տեսանկյունից կարող է դիտարկվել որպես խտրական, վիրավորական կամ նվաստացուցիչ վերաբերմունք: Քրեակատարողական ոլորտի բարեփոխման ռազմավարական ծրագրերով նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց պահման պայմանների բարելավման տեսանկյունից առավել թիրախային լուծման տարբերակ կլինի վերջիններիս համար առանձնացված մասնաշենքի կառուցումը, որը շինարարական չափորոշիչների տեսանկյունից հարմարեցված կլինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, իսկ դրանից զատ կարծում ենք, առավել նպատակահարմար է, որ տվյալ մասնաշենքի ծառայողներն ունենան (կամ մասնաշենքում ծառայության անցնելու նպատակով վերապատրաստվեն) որոշակի բժշկական ուղղվածության մասնագիտացում, որպեսզի պայմաններում առավել արդյունավետ և թիրախային կկազմակերպվի հաշմանդամություն ունեցող անձանց պատժի կրման գործընթացը և չի հանգեցնի վերջիններիս հիմնական իրավունքների

խափանման:

15. Միջազգային-իրավական չափորոշիչների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվող և լեզվին չտիրապետող օտարերկրյա դատապարտյալին պետք է պատշաճ պարզաբանվեն իր իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև իրենց հասկանալի լեզվով կամ առավել տարածված լեզուներով տրամադրվեն հուշաթերթիկներ: Այս առումով ներպետական իրավակարգավորումներն ունեն լրացման կարիք, քանի որ փաստացի չեն կարգավորվում այն իրավիճակները, թե ինչպես անձին պետք է պարզաբանվեն իր իրավունքները և պարտականությունները, երբ վերջինս չի տիրապետում հայերենին, ինչպես նաև չկա կարգավորում այն մասին, որ քրեակատարողական հիմնարկն առնվազն պետք է ապահովված լինի առավել շատ օգտագործվող լեզուներով դատապարտյալի իրավունքները և պարտականությունները պարունակող հուշաթերթիկներով:

16. Միջազգային-իրավական չափորոշիչների համաձայն՝ յուրաքանչյուր դատապարտյալ ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք և քրեակատարողական հիմնարկը պետք է հնարավորության դեպքում պայմաններ ստեղծի անձի՝ իր կրոնը դավանելու իրավունքի իրացման համար:

Այս մասով, ներպետական օրենսդրությունը համապատասխանում է ամրագրված միջազգային չափորոշիչներին, ավելին՝ առավել զարգացրել է այս իրավունքը սահմանելով, որ դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական, հոգեթերապևտիկ և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, կրոնական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը, պետք է պիտանի և համարժեք լինեն դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելու համար:

17. Քրեակատարողական համակարգն իր ներկայիս զարգացման մակարդակում ի զորու չէ լուծել քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացի դատապարտյալների նկատմամբ նշանակվող պատժի առանցքային նպատակը՝ դատապարտված անձին վերասոցիալականացնելը, քանի որ վերասոցիալականացման գլխավոր գործիքը՝ անձի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների համալիրն է, որն առավել բարդ է իրականացնել այն դեպքում, երբ անձը ում հետ տարվում են աշխատանքներ չի հաղորդակցվում այն լեզվով, որին ինքը տիրապետում է: Ստացվում է մի իրավիճակ, երբ պետությունն անձի նկատմամբ նշանակում է պատիժ ոչ թե Քրեական օրենսգրքով նախատեսված նպատակներին հասնելու, այլ պարզապես վերջինիս հասարակությունից մեկուսացնելու համար: Խնդրահարույց է մնում նաև անազատության մեջ պահվող օտարերկրյա դատապարտյալների հաղորդակցվելու, իր նվազագույն իրավունքներին ծանոթացվելու, ինչպես նաև պահման բավարար պայմաններ ունենալու հարցերը: Այս մասով քրեակատարողական համակարգի՝ միջազգային-իրավական մակարդակում ընդունված ժողովրդավարական սկզբունքների համապատասխանության ապահովման ուղղությամբ քաղաքականության իրականացումը կարող է շտկել հեղինակի կողմից վեր հանված խնդիրները և դրանք համապատասխան ակտերում ամրագրելով կարող ենք հասնել նաև օտարերկրյա դատապարտյալների

վերասոցիալականացման նպատակի արդյունավետ իրականացմանը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1) Լազարյան Ա., ««Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման առանձնահատկությունները քրեակատարողական հիմնարկներում և դրանց կատարման համապատասխանությունը միջազգային իրավական չափանիշներին», Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, № 2, Գյումրի, 2021, էջեր 180-189:

2) Լազարյան Ա., «Ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառել ու հետկապված որոշ գործնական հարցեր», «Օրենքի Պատվար» գիտամեթոդական ամսագիր, № 14 (2022), Երևան, էջեր 46-60:

3) Լազարյան Ա., «Կին դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 2023 2(59), էջեր 6-10:

4) Լազարյան Ա., ««Բանտարկյալ» միջազգային-իրավական եզրույթի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում», «Օրենքի Պատվար» գիտամեթոդական ամսագիր, № 16 (2023), Երևան, էջեր 33-44:

5) Լազարյան Ա., «Անչափահաս դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման որոշ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 4-9/286-291, 2023, Երևան, էջեր 114-122:

6) Лазарян А.А., “Профессиональная деформация сотрудников пенитенциарных учреждений и ее влияние на процесс ресоциализации осужденных”, Сборник материалов IV международной научно-практической конференции «Гуманитарные и технические открытия 2024», Москва, С. 129-131.

7) Лазарян А.А., “Международные стандарты обращения с иностранными гражданинами осужденными и основные проблемы их применения в Республике Армения”, Сборник материалов V международной научно-практической конференции «Научный взгляд 2024», Москва, С. 124-128.

8) Лазарян А.А., “Понятие международно-правовых стандартов обращения с осужденными”, Сборник материалов международной научно-практической конференции «Научные исследования современных учёных» 20 мая 2024, Том 1, Москва. С. 140-145.

9) Լազարյան Ա., «Հաշմանդամություն ունեցող դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Օրենքի պատվար» գիտամեթոդականամսագիր, № 17 (2024), Երևան, էջեր 118-130:

10) Լազարյան Ա., «Քրեակատարողական հիմնարկներում օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական ապահովման որոշ առանձնահատկություններ», ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո

«Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», № 12, 2024, Երևան, էջեր 55-60:

**ЛАЗАРЯН АРПИ АШОТОВНА**

## МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ СТАНДАРТЫ ОБРАЩЕНИЯ С ЛИЦАМИ ОСУЖДЕННЫМИ К ЛИШЕНИЮ СВОБОДЫ, И ПРОБЛЕМЫ ИХ ПРИМЕНЕНИЯ И ИМПЛЕМЕНТАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

### РЕЗЮМЕ

В последние годы Республика Армения претерпела значительные реформы в сфере уголовной политики, что привело к принятию и введению в действие новых Уголовного, Уголовно-процессуального и Уголовно-исполнительного кодексов. Эти изменения коренным образом изменили подход страны к уголовному праву и борьбе с преступностью.

Особого внимания заслуживает уголовно-исполнительная политика, в рамках которой, согласно новым законодательным положениям, подчеркивается принцип перехода Республики Армения от карательной политики к восстановительной. Это является следствием усиленной в последние годы международной интеграции государства и внедрения на международном уровне признанных человекоцентричных и демократических принципов, обязательства по которым Республика Армения взяла на себя на конституционном уровне.

В этом контексте важно привести национальные законодательные нормы в соответствие с международными стандартами. Следует отметить, что принцип верховенства международных норм особенно важен в таких сферах, которые чувствительны с точки зрения защиты основных прав человека, включая уголовно-исполнительную систему. Именно в этой сфере ограничиваются свобода, неприкосновенность и другие права человека, личность изолируется от общества. И хотя борьба с преступностью важна, она не должна нарушать права личности, а ее результатом и целью должно быть исключительно привитие и развитие у личности социальных ценностей.

Следует отметить, что, хотя указанное число имеет тенденцию к

снижению, обеспечение основных прав лиц, находящихся в местах лишения свободы, их защита от различных посягательств и, в конечном счете, формирование у них законопослушного поведения, их реинтеграция и ресоциализация были и остаются одними из важнейших задач, стоящих перед государством.

Право, без определения и закрепления механизмов его практического применения, без осуществления непрерывного мониторинга его применения и постоянного развития, является лишь проявлением доброй воли.

В конечном счете, говоря о нормах, закрепленных в международных актах, важно подчеркнуть, что их принятие само по себе недостаточно; необходимо также сделать их частью уголовно-исполнительной системы, закрепив на законодательном уровне и внедрив необходимые и достаточные механизмы практического применения, поскольку при обсуждении процесса реализации международных стандартов в профессиональной литературе используется термин «имплементация», который, согласно своему происхождению, имеет латинские корни и происходит от слова «impleo», означающего «выполнять».

Несмотря на все это, следует подчеркнуть, что уголовно-исполнительная сфера в Республике Армения была и остается малоизученной. На теоретическом уровне немногочисленны ученые, проводившие исследования, а сфера применения и имплементации международно-правовых стандартов обращения с осужденными остается вообще не исследованной.

Актуальность темы «Международно-правовые стандарты обращения с лицами, осужденными к лишению свободы, и проблемы их применения и имплементации в Республике Армения» обусловлена также рядом других обстоятельств. Во-первых, до сих пор в Республике Армения не проводилось исследование в области международных актов, устанавливающих стандарты обращения с осужденными, которое позволило бы системно представить существующие в обсуждаемой сфере международные акты. Во-вторых, для надлежащей имплементации этих актов прежде всего необходимо не только систематизировать их, но и классифицировать по группам, чтобы понять, какие из них обязательны для исполнения, а какие носят исключительно рекомендательный характер.

Кроме того, следует отметить, что, хотя существующие в международном и национальном законодательстве нормы почти в равной степени относятся ко всем лицам, лишенным свободы, отдельные категории лиц, находящихся в местах лишения свободы, нуждаются в особом отношении, а в некоторых случаях и в отличных условиях содержания, например, несовершеннолетние, женщины, иностранные граждане или лица без гражданства, а также осужденные, нуждающиеся в медицинской помощи.

Тем не менее, хотя в последние годы в уголовно-исполнительной сфере проведены масштабные реформы, остаются актуальными такие важные проблемы, как реализация программ ресоциализации, обеспечение занятости осужденных, медицинское обслуживание и ряд других ключевых вопросов.

Научная новизна исследования заключается в том, что в Республике Армения впервые предпринята попытка на уровне диссертации проанализировать международно-правовые акты, устанавливающие стандарты обращения с осужденными, сопоставив их и сравнив как с национальными правовыми актами, так и с правоприменительной практикой. Исследование проведено на основе отечественных и зарубежных теоретических источников, ряда исследований, проведенных международными организациями и общественными объединениями, а также динамического изучения деятельности учреждений и органов, исполняющих наказания.

**ARPI ASHOT LAZARYAN**

**INTERNATIONAL LEGAL STANDARDS FOR THE TREATMENT OF PERSONS SENTENCED TO IMPRISONMENT AND THE FUNDAMENTAL ISSUES OF THEIR APPLICATION AND IMPLEMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA**

**RESUME**

In recent years, the Republic of Armenia has undergone significant reforms in its criminal policy, leading to the adoption and implementation of new Criminal, Criminal Procedure, and Penitentiary Codes. These changes have fundamentally reshaped the country’s approach to criminal justice and crime prevention.

A particularly noteworthy aspect of these reforms is the shift in penitentiary policy. According to the new legislative framework, Armenia is transitioning from a punitive approach to a restorative justice model. All this is a consequence of the more pronounced internationalization of the state in recent years and the integration of internationally accepted human-centered and democratic principles, the responsibility of which the Republic of Armenia has assumed at the Constitutional level.

In this context, the harmonization of domestic legislation with international

standards is of paramount importance. Notably, the principle of the primacy of international norms is particularly crucial in fields that are sensitive from the standpoint of protecting fundamental human rights, including the penitentiary system. This is one of the most critical areas in terms of human rights protection, as it involves the restriction of liberty, personal inviolability, and other rights by isolating individuals from society. Although the fight against crime is important, it must not come at the expense of individual rights; rather, its ultimate goal should be the cultivation and development of social values in individuals.

Although this figure has shown a downward trend, guaranteeing the fundamental rights of persons in detention, protecting them from various forms of abuse, and ultimately fostering law-abiding behavior to support their reintegration and resocialization remain among the state’s most pressing responsibilities.

Law, in the absence of mechanisms for its practical implementation, enforcement, and continuous monitoring, becomes nothing more than a declaration of goodwill. Therefore, the adoption of international standards alone is not sufficient; it is essential to incorporate them into the penitentiary system through the development of appropriate legal frameworks and mechanisms for effective application. The term “implementation,” derived from the Latin “impleo,” meaning “to fulfill,” is used in professional literature to describe this process.

Nevertheless, the penitentiary system in the Republic of Armenia remains insufficiently studied. Only a limited number of scholars have conducted research in this field, and the challenges related to the application and implementation of international legal standards concerning the treatment of prisoners remain almost entirely unexamined.

The relevance of the topic “International Legal Standards for the Treatment of Inmates and Issues of Their Application and Implementation in the Republic of Armenia” is underscored by several factors. Firstly, to date, no comprehensive study has been conducted in Armenia to systematically present international acts establishing standards for the treatment of inmates. Secondly, proper implementation of these acts requires not only their systematization but also their classification into groups to determine which are mandatory and which are advisory.

Moreover, while international and domestic legislation generally apply equally to all individuals deprived of liberty, certain categories require special treatment and, in some cases, different conditions of detention. These include minors, women, foreign nationals or stateless persons, and inmates requiring medical assistance.

Nevertheless, despite the large-scale reforms undertaken in the penitentiary sector in recent years, a number of pressing issues remain relevant—among them, the implementation of resocialization programs, the provision of employment opportunities for inmates, access to medical care and services,

and several other key challenges.

The scientific novelty of this research lies in its attempt, for the first time at the dissertation level in Armenia, to analyze international legal acts establishing standards for the treatment of inmates, comparing them with domestic legal acts and law enforcement practices. The study is based on theoretical sources from Armenia and various foreign countries, research conducted by international organizations and NGOs, as well as a dynamic analysis of the activities of penal institutions and bodies.